ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<19>> <<սեպտեմբեր >> 2017 թ N 108

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՕՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դ) ենթակետի, ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ – 728 հրամանագրի 1.6 – րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի <<Բակային սպորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N 34 արձանագրային որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ ԵՄ՝

1. Մարզի բնակչության առողջության ամրապնդման, աշխատունակության բարձրացման, երկարակեցության խթանման, ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն երիտասարդ սերնդի ձևավորմանը խթանելու նպատակով 2017 թվականի սեպտեմբերի 23-ը հայտարարել ֆիզիկական կուլտուրայի օր:
2. Պահանջել աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունից /պետ՝ Ա.Ղազարյան/, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հիմնարկների, արտադրական ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ միասին առաջիկա ֆիզիկական կուլտուրայի օրը նշել պատշաճ ձևով՝ անցկացնելով մասսայական սպորտային միջոցառումներ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վետերանների մեծարման հանդիսություններ և այլն:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ